ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ *Մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա*

Թեմա՝ «Համագործակցային ուսուցումը տարրական Դասարաններում»

Հետազոտող՝ *Նառա Վլադիմիրյան*

Սյունիքի մարզի «Հարժիսի Հ.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Դասվար

Ղեկավար՝ *Թամարա Աթայան*

Գորիս 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
1.Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում-----4

2.Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ.----------6

3.Համագործակցային ուսուցման մեթոդներ ----------7-

4.Համագործակցային ուսուցման մեթոդներ----------10

Եզրակացություն----------14

Օգտագործված գրականության ցանկ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոր երեխաները չեն կարող սովորել նույն ձևով և նույն կրթական մեթոդով: Ուսուցչի ամենակարևոր դերը բոլոր աշակերտների համար այնպիսի բարենպաստ միջավայրի ստեղծումն է, ուր նրանք կկարողանան արտահայտել իրենց ուժեղ կողմերը, սովորել իրենց նախկին գիտելիքից և դառնալ գիտելիքի ակտիվ մշակողները:

Այս ամենը հնարավոր է իրականացնել համագործակցային ուսուցման ընթացքում:Այդ ընթացքում ստեղծվում են աջակցող և փոխադարձաբար նվիրված հարաբերություններ, բանիմացության և ինքնարժևորման առավել բարձր աստիճաններ: Համագործակցային ուսուցումը երեխային մղում է ավելի լավ սովորել, քանի որ **«Երբ սովորեցնում ես, սովորում ես կրկին»**: Համագործակցային ուսուցման գործընթացում աշակերտները ընկալողներ չեն: Ուսուցիչը տեղեկություններ տրամադրողից և հրամայողից վերափոխվում է ուսուցման հրահանգչի: Նա ուսուցման հիմնական պատասխանատվությունը փոխանցում է աշակերտներին և վստահում նրանց՝ իրենց աշխատանքում:

1.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Համագործակցային ուսուցումը նպաստում է կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն: Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս[1]: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: <<Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար>>[2]:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

[1] Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, էջ 175:

[2] Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, էջ 18:

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Դ. և Ռ.Ջոնսոնների, հիմնականում հինգն են.

- դրական փոխկախվածություն,
- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,
- խմբային գործընթացի մշակում:

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը: Պասի Սահլբերգը փոխներգործուն (ինտերակտիվ) առաջադրանքը դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: ‹‹Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ››[3]:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: ‹‹Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն

[3] Խաչատրյան Ս. Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 17-24:

աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին››[4]: Համագործակցային ուսուցման կազմակերպումը Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

2.Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ.

‹‹Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում››[5]: Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է

---

[4] Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004, էջ 145:

[5] Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, էջ 48:

լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

3.Համագործակցային ուսուցման մեթոդներ

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

1. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

2. Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո

խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ ‹‹Ձիգսո 2››, որի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

3.Շրջագայություն պատկերասրահում: Սա ‹‹Խճանկար›› մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

4. Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը: Օրինակ՝ ‹‹Այ քեզ բա՞ն, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է›› (Կարինե Թորոսյան և ուրիշներ, ‹‹Մայրենի 4, էջ 62››): Քանի որ բնագիրը ծավալուն է, այն բաժանում ենք երկու մասի և յուրաքանչյուրից ընտրում հավանական բանալիները և կողպեքը:

I հատված. Բանալիները՝

1. Ուշացել են նրանք, ովքեր զոհվեցին:

2. Ինչու՞ զոհվեցին, հայրի՜կ:

3. Կռվում էին: Կողպեքը՝ - Կռվում են հանուն հայրենիքի, զոհվում են հանուն հայրենիքի, զոհվում են իրենց պատվի, արժանապատվության համար:

II հատված. Բանալիները՝

1. – Ա՜յ հեր, հլա ասա հասկանամ, էդ մեր ամեն ինչի դասատուն որ ասում է, թե հանուն հայրենիքի, դա ո՞րն է…

2. – Էս ծաղկած հողը, որին հեր ու տղա նստել ու իրար կարոտ ենք առնում, էս հողը, որ մեզ հաց է տալիս:

3. - Ամեն, ամեն ինչ, ինչ տեսնում ու չես տեսնում, հայրենիք է, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՜յ-րե՜-նի՜ք է:

Կողպեքը՝ -Ես նայեցի կապույտ-կապույտ երկնքին, մեր ծմակին, սարի ճամփին, քարափի կարմիր-կարմիր պուտերին, հորս շունչն առա, նայեցի նրան, զգացի, որ ամեն ինչ՝ հայրս էլ հետը հայրենիք է:

Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

4.Դասի պլան

Ներկայացնենք համագործակցային ուսուցմամբ դասի օրինակ.

Դասի պլան - Երրորդ դասարան

Դասի թեման - Սողոմոն Մկրտչյան «Թագավորն ու հողագործը»:

Առաջին դասաժամ - Հաղորդման դաս:

Նպատակը – ա) Ուսումնական - Աշակերտները կսովորեն վարժ, հասկանալով և առոգանությամբ ընթերցել, ճիշտ և անսխալ գրել, կռահումներ ու դատողություններ անել, վերլուծել ու բնութագրել: Փոքր խմբերում կքննարկեն բնագրի հերոսների կարծիքը միևնույն հասկացության վերաբերյալ, ինչպես նաև լեզվական նյութի շուրջ կկատարեն աշխատանք՝ զարգացնելով համագործակցային կարողություններ:

բ) Դաստիարակչական - Կիմանան բնության հետ վարվելու, ծառեր աճեցնելու և խնամելու, բարիք ստեղծելու մասին, մի խոսքով՝ կհասկանան աշխատանքի դերն ու նշանակությունը:

գ) Պահվածքը - Կլինեն հանդուրժող, աջակցող, կարգապահ, ճիշտ հաղորդակցվող և համագործակցող: Արժեքային համակարգը - Կգնահատեն բնությունը, կիմանան հողի, ծառի, թփի, ինչպես նաև ճիշտ ու տեղին ասված խոսքի արժեքը:

Սպասելիք արդյունքները – Կկարողանան վարժ և առոգանությամբ կարդալ երկխոսությունները, կտարբերակեն հեղինակի և մեջբերվող խոսքերը: Դերային խաղով կներկայացնեն հերոսների երկխոսությունը՝ բացատրելով կետադրությունը: Կկրկնեն բառակազմության մասին ունեցած գիտելիքները՝ արմատ, ածանց, պարզ և բարդ բառեր:

Ուսումնական նյութեր – Տարբեր տեսակի ծառերի, հատկապես կաղնու, շիվերի, ծառատունկի, թագավորի, շքախմբի նկարներ:

Օգտագործվող մեթոդներ - «Կանխագուշակումներ հենակետային բառերով ու արտահայտություններով», «Կրկնակի գրառումներով օրագիր», «Բացատրական ընթերցանություն», «Երեք բանալի, մեկ կողպեք», «Համագործակցային խմբեր»:

Դասի ընթացքը: *Առաջին փուլ՝ խթանում:*

Այս փուլում օգտագործում ենք «Կանխագուշակումներ հենակետային բառերով ու արտահայտություններով» մեթոդը: Գրատախտակին նախօրոք գրում ենք դասի վերնագիրը և **թագավոր, շքախումբ, զառամյալ ծերունի, կնճռապատ ճակատ, քրտինք թափել, ընկուզենի, շիվ, պտուղներ, գանձարան, կալվածք, զինանոց, վեզիր, պարգև** բառերն ու արտահայտությունները: Աշակերտներին առաջարկում ենք կանխագուշակումներ անել տեքստի բովանդակության վերաբերյալ, փոքրիկ պատմություն հորինել և գուշակել, թե ինչ կապ կարող է ունենալ տունկը պարգևատրման հետ: Կարող են աշխատել զույգերով կամ համագործակցային փոքր խմբերով: Աշակերտների գուշակությունները և փոքրիկ պատմությունները լսելուց հետո առաջադրում ենք կարդալ հղումը՝ «Ծառ տնկելը շատ բարի գործ է, քանի որ ծառն ինքը բարիքի աղբյուր է: Ինչպես գիտենք, ծառերը միանգամից պտուղ չեն տալիս, բայց այս պատմվածքի նորատունկ ծառը մեկ օրում երկու անգամ առատ բերք պարգևեց: Զարմացա՞ր: Կարդանք…»: Բացատրությունը տալիս ենք բնագիրը կարդալուց հետո, երբ աշակերտներին ծանոթ կլինի այն:

Երկրորդ փուլ՝ իմաստավորում:

Այս փուլում ընտրում ենք «Բացատրական ընթերցանություն» և «Կրկնակի գրառումներով օրագիր» մեթոդները: Աշակերտներն ընթերցում են դասանյութը՝ զուգահեռ բացատրելով նորածանոթ բառերը, արտահայտությունները և կետադրությունը: Երկրորդ անգամ ընթերցելուց հետո ստեղծում ենք նշված օրագիրը, որի համար աշակերտները թուղթն ուղղահայաց գծով բաժանում են երկու մասի: Ձախ կողմում գրում են բնագրի տպավորիչ հատվածները, իսկ աջ կողմում՝ նշված յուրաքանչյուր հատվածի վերաբերյալ մեկնաբանություններ և բացատրում (Ինչի՞ մասին է այդ հատվածը: Ի՞նչ է հիշեցնում այն: Ինչո՞ւ է այդ հատվածը կարևորում): Բառային աշխատանքի ժամանակ առաջադրում ենք բացատրել **շքախումբ, կնճռապատ, մրմնջալ, վարձահատույց, գանձարան, ակնեղեն, զինանոց, ընկուզենի, գեղջուկ** բառերի կազմությունը և ուղղագրությունը: Մեկ անգամ ևս աշակերտները հիշում և կրկնում են, որ բառերն ըստ կազմության լինում են պարզ (արմատական), բարդ և ածանցավոր: Էջ 10-ի լեզվական աշխատանքները երեքն են, որոնց կատարումը կարելի է կազմակերպել ըստ

մակարդակների ուսուցմամբ՝ համագործակցային խմբերով՝ բաժանվելով երեք խմբի: Առաջին առաջադրանքը հանձնարարում ենք առաջին խմբի աշակերտներին: Նրանք պետք է օգտվեն տրված նկարից, կազմեն ածանցավոր ու բարդ բառեր ու գրեն տետրերում: Նկարում պատկերված ծառի արմատին գրված է **արև** բառը, իսկ ճյուղերին՝ **ոտ, ելք, փայլ, համ, ծաղիկ, բույր, շող, ան, ային, մուտք** ածանցներն ու բառերը: Աշակերտները, իրար օգնելով, կազմում և տետրում գրում են հետևյալ բառերը՝ **արևոտ, արևելք, արևափայլ, արևահամ, արևածաղիկ** և այլն: Ովքեր արագ ավարտում են, անցնում են հաջորդ առաջադրանքին: Երկրորդ առաջադրանքը հանձնարարում ենք երկրորդ խմբի աշակերտներին: Նրանք պետք է տրված բառերով կազմեն բարդ բառեր: Աշակերտները, մտքեր փոխանակելով, բնագրից օգտվելով, տրված բառերով կազմում են հետևյալ բարդ բառերը՝ **շքախումբ, կնճռապատ, հողագործ, շնորհակալ**: Երրորդ առաջադրանքը առաջադրում ենք երրորդ խմբի աշակերտներին: Նրանք մեկնաբանում են **«Քրտինք թափել»** դարձվածքը՝ պատմելով դրվագային նկարների բովանդակությունը, համեմատություններ անցկացնելով նրանց միջև, բացատրելով եղած կետադրական նշանները: Աշակերտներն ասում են, որ առաջին նկարում դարձվածքն օգտագործված է ուղիղ իմաստով (դույլը պահել է, և ճակատից քրտինքը կաթիլներով թափվում է), իսկ երկրորդ և երրորդ նկարներում՝ փոխաբերական իմաստով և նշանակում է քրտնաջան, անդադար աշխատել, ջանք թափել, ջանալ: Նկարներից մեկում մարդը փայտ է տաշում, իսկ մյուսում՝ գրքերը սեղանին դրված՝ մտածում ու գրում է: Վերջում եզրակացնում են՝ **«Ով աշխատի, նա կուտի»** և բացատրում:

Կշռադատման փուլում կիրառում ենք **«Երեք բանալի, մեկ կողպեք»** մեթոդը: Աշակերտներին առաջարկում ենք բնագրից դուրս գրել երեք նախադասություն, որոնք պետք է ընտրվեն կողպեքի՝ առածի բովանդակությունից դուրս գալով: Վերջում ամփոփում ենք դասը, և աշակերտները կարդում են **«Այսպիսով, աշխատանքը մայրն է ամեն բարիքի»** հղումը և մեկնաբանում: Եզրահանգում. **«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»**: Ջեյմս Ուայթսոն ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը

Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունները ցույց են տալիս,որ սովորելու անհատական ոճերի, սովորողի ինքնուրույնության և շարժառիթների իրականացման լավագույն ձևը համագործակցային ուսուցումն է: Միասին աշխատելով՝ աշակերտները կարող են համատեղ նպատակների հասնել:‹‹Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորություն իրականացնելու համար››:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, էջ 18:
2. Խաչատրյան Ս. Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 17-24:
3. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004, էջ 145:
4. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, էջ 48:
5. Վարդումյան Ս., Ձաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, էջ 175: